



Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունք

ՄԵՐ ԳՈՐԾԵԼԱԶԵԻԸ

1 | Նպաստատուութիւն, գործընկերութիւն եւ գործակցութիւն

Իբրեւ նպաստատու կազմակերպութիւն մեր հիմնական աշխատանքը նիւթական միջոցներ տրամադրելն է նախագիծերու եւ ծրագիրներու, որոնք համահունչ են Հիմնարկութեան սահմանած [առաջնահերթութիւններուն](#) եւ գործունէութեան ուղղութիւններուն: Կը գործակցինք անհատներու եւ կազմակերպութիւններու հետ, որոնք կը մշակեն եւ կիրականացնեն հաստատուած [կարիքներ](#) բաւարարելու միտող նախագիծեր: Կը ձգտինք աշխատիլ գործընկերներու հետ, որոնք կը մշակեն ինքնատիպ նախաձեռնութիւններ՝ հիմնուած յառաջադէմ սկզբունքներու վրայ: Նաեւ նշանակալից դեր կը խաղանք նոր նախաձեռնութիւններ մշակելու գործին մէջ եւ կը փնտռենք զանոնք իրականացնելու ատակ գործընկերներ:

Միշտ կը ձգտինք կարելի չափով առաւելագոյն ներգործութիւն ունենալ մեր տրամադրած միջոցներով:

Ա. Նպաստատուութիւն

Կընդունինք Հիմնարկութեան [առաջնահերթ ոլորտներուն](#) համահունչ առաջարկներ: Կաշխատինք ծրագրային հիմամբ՝ ընտրելով սահմանափակ թիւով մասնայատուկ նախագիծեր, հաւատալով որ կրնանք ապացուցելի ներդրում ունենալ անոնց իրագործումին մէջ: Կընդունինք մեր ուշադրութեան ոլորտներուն համապատասխան առաջարկներ՝ ձգտելով բարերար ներգործութեան:

Կընդունինք Հիմնարկութեան համակարգին միջոցով առցանց կատարուած դիմումներ: Լրացուցիչ տեղեկութիւններ կարելի է գտնել Նախագիծերու նպաստներու վերաբերող [“Requirements, Criteria and Conditions”](#)՝ «Պահանջներ, չափանիշներ եւ պայմաններ» փաստաթուղթին մէջ: Նախագիծերու նպաստներու վերաբերող դիմումներու մեր



“[Guidelines](#)” «Ուղեցույց» փաստաթուղթը կարելուք տեղեկություններ կ'ընձեռեք դիմողներուն: Հարկ է զայն ուշադիր կարդալ նախքան դիմում կատարելը: Հիմնարկության կողմէ համալսարանականներու եւ հետազոտողներու տրամադրելի [Կրթանպաստի ծրագիրներ](#)էն օգտուելու համար հարկ է ծանօթանալ կրթանպաստի հիմնական բաժիններէն իրաքանչիւրին պայմանները նշող փաստաթուղթերուն:

Վճարումներ կը կատարենք միայն Հիմնարկության կողմէ պատրաստուած Նպաստատուութեան համաձայնագիրին (իրաւական փաստաթուղթ մը) ստորագրումէն ետք: Վճարումները ընդհանրապէս կը կատարուին մաս առ մաս՝ յստակ նշուած նախագիծի յանձնումներու կամ (եւ) նախագիծի զեկոյցներու դիմաց: Հաշուեփակը կը կատարուի, երբ նախագիծի մը իրագործումը մը կը հասնի իր լրումին:

Բ. Թափանցիկութիւն

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկության Հայկական Համայնքներու Բաժանմունքը յանձնառու է թափանցիկութեան: Մեր երկլեզու [կայքէջ](#)ին վրայ կանոնաւոր դրութեամբ կը հրատարակենք տեղեկություններ մեր յատկացուցած նպաստներուն եւ կրթանպաստներուն մասին: Ասոնք կընդգրկեն կրթանպաստներու հաշուետուութիւն եւ մեր զօրակցութիւնը ստացած նախագիծերու ցանկեր:

Գ. Ինչպէ՛ս գործընկերներ եւ նախագիծեր կ'ընտրենք նպաստատուութեան համար

Հիմնարկութիւնը նպաստատուութեան համար գործընկերներ եւ նախագիծեր կ'ընտրէ ճշգրիտ գնահատումի գործընթացով, ներառեալ՝ հետազոտութիւն, ներգրաւուածութիւն, խորհրդակցութիւն եւ յղումներու ստուգում:

Ուշադիր կ'արժեւորենք իրաքանչիւր նախագիծի առաջարկ եւ որոշումներ կ'առնենք նկատի ունենալով զանազան գործօններ, որոնց շարքին՝ առաջարկին առնչութիւնը մեր առաջնահերթութիւններուն, անոր հաւանական ներգործութիւնը, մեր տրամադրութեան տակ գտնուող դրամական միջոցները, նմանատիպ ուրիշ նախաձեռնութիւններու առկայութիւնը եւ նախագիծը իրականացնելու գործընկերոջ կարողութիւնը:

Նախագիծեր կ'ընտրենք տարբեր միջոցներով: Հիմնարկութիւնը դիմումներ կ'ընդունի ամբողջ տարուան ընթացքին, երեք բաց փուլերով: Դիմումնաշրջաններուն եւ վերջնաժամկէտներուն մասին տեղեկություններ կարելի է գտնել [այստեղ](#): Երբեմն նաեւ կը



յայտարարենք մրցանակներ կամ բաց մրցույթներ՝ գաղափարներու համար որ կը փափաքինք իրականացնել:

Բոլոր այն նախագիծերը, որոնց կը զօրակցինք, կը վաւերացուին Բաժանմունքի տնօրէնին եւ Բաժանմունքի պատասխանատու հոգաբարձուին կողմէ: Համեմատաբար ծաւալուն նախագիծեր պէտք է վաւերացուին Հիմնարկութեան նախագահին կամ Գործադիր Հոգաբարձու Մարմինին ամբողջական կազմին կողմէ:

Կը հաւատանք գործակցական յարաբերութիւններու եւ կը քաջալերենք զանոնք: Ասիկա կը նշանակէ ընկալել տարբերութիւնները, ունենալ պատշաճ գրոյցներ եւ սորվիլ հաւաքաբար:

Զանց ընելով հազուադէպ բացառութիւնները՝ Հիմնարկութիւնը ինք նախագիծեր չ'իրականացնէ:

Դ. Յաջող գործակցութեան սկզբունքներ

Հիմնարկութեան պատկերացումով յաջող գործակցութիւններու առաջնորդող ուղին կընգրկէ.

- Նպատակներու հասարակաց յանձնառութիւն եւ արդիւնքներ ձեռքբերելու ձգտում,
- Հասարակաց ըմբռնում գործակցութեան բնոյթին, դիտաւորութեան, նպատակներուն եւ տեսողութեան, ինչպէս նաեւ իւրաքանչիւր գործընկերոջ բերելիք նպաստին,
- Փոխադարձ յարգանք եւ աճող վստահութիւն որ կը պահպանուի գործակցութեան ամբողջ տեսողութեան եւ անկէ անդին,
- Բաց եւ անկեղծ հաղորդակցութիւն՝ տեղեկութիւններ կիսելու, իրարմէ սորվելու եւ յառաջանալիք խնդիրները քննարկելու կամեցողութեամբ,
- Փոխադարձ ճկունութիւն եւ զրուցատրութիւն՝ ծրագիրներ բարեփոխելու կամեցողութեամբ, արձագանգելով յառաջ եկող ապացոյցներու կամ փոփոխուող կարիքներու եւ պայմաններու,
- *Զօրակցութիւն՝ նպաստատուութենէ անդին.* պատրաստ ենք պատշաճ առիթներով առաջարկներ կատարելու, խորհուրդներ տալու, անհատներու եւ կազմակերպութիւններու միջեւ կապերը դիւրացնելու եւ մեր զօրակցութիւնը վայելող աշխատանքներէն դասեր քաղելու ու փոխանցելու:



2 | Զեկուցում

Զեկուցելը կենսական է Հիմնարկության համար: Առիթ կու տայ մեզի որ հաւաքենք ու կիսենք առանձին նախագիծերէ եւ նպաստատուութեան հոսքերէ մեր սորվածը եւ զարգացնենք ապագային նախագիծերու լաւագոյնս զօրակցելու մեր իմացութիւնը:

Հիմնարկութեան հաշիւները կը քննուին տարեկան դրութեամբ: Պարտաւոր ենք զեկույցներ պատրաստել նաեւ հաշուեքննութեան նպատակով:

Մեր ակնկալութիւնները

Մեր բոլոր գործընկերներէն կը խնդրենք ներկայացնել մեր զօրակցութիւնը վայելող աշխատանքներուն վերաբերող զեկույցներ: Ասիկա մեր զօրակցութեան պայմաններէն է: Նաեւ միշտ կը խնդրենք ծրագիրներու եզրափակիչ զեկուցում: Սովորաբար կը խնդրենք նաեւ միջանկեալ զեկույցներ, սակայն այս մէկը կախեալ է յատկացուած նպաստին չափէն եւ ծրագիրին տեսողութենէն:

Զեկույցները պէտք է ըլլան հակիրճ, ներկայացնելով իրագործուած աշխատանքին գլխաւոր երեսները: Կը քաջալերենք մեր գործընկերները որ անկեղծ ըլլան եւ յաջողութիւններու մասին տեղեկացնելու կողքին նաեւ պատմեն մարտահրաւերներու եւ ոչ այնքան բարեյաջող ընթացքներու մասին:

Ընդհանրապէս մեր գործընկերներէն կը խնդրենք իրենց զեկույցներուն մէջ մեկնաբանել՝

- Զեռքբերուած արդիւնքներ,
- Յայտնուած յատուկ մարտահրաւերներ կամ պատեհութիւններ,
- Քաղուած դասեր,
- Արտադրանքի ցուցանիշներ,
- Ներգործութիւն՝ ծրագիրէն անդին,
- Պիտածէի հաշուեցոյց:

Կը քաջալերենք մեր գործընկերները որ գնահատականը կատարեն իրենց նախագիծերուն: Տեսաբար ներքին գնահատումի կենթարկենք նախագիծերը: Երբեմն նաեւ մեր ծրագիրները ընդհանուր գնահատումի կենթարկուին Հիմնարկութեան կողմէ պաշտօնի կոչուած արտաքին գնահատողներու կողմէ:



3 | Հաղորդակցութիւն

Հիմնարկութիւնը յանձնառու է առաւելագոյնի հասցնելու նպաստատուութեան իր բարերար ներգործութիւնը եւ իրականացնելու դրական փոփոխութիւններ: Հետեւաբար պատեհ առիթներով խանդավառութեամբ կը ծանօթացնենք մեր գործընկերներուն աշխատանքը եւ իրենց հետ կը գործակցինք գիտութիւն տարածելու նպատակով:

Մեր ակնկալութիւնները

Մեր գործընկերներէն ի՛նչ կ'ակնկալենք ընել՝ ընդհանուր գիծերու մէջ ստորեւ.

- Հրապարակելէ առաջ մեզի ուղարկել նախնական տարբերակները այն նիւթերուն, որոնց պատրաստութեան զօրակցած ենք (տեղեկագրութիւն, տեսանիւթ, գործիքակազմ եւ այլն):
- Մեզի տեղեակ պահել մեր զօրակցութիւնը վայելող աշխատանքին առնչուած ձեռնարկներու ծրագրումին մասին (խորհրդաժողով, գիտաժողով, աշխատանոց, ընդունելութիւն):
- Մեզի տրամադրել մեր նպաստատուութեամբ իրականացած գործերու վերաբերող հաղորդագրութիւններու սեւագրերը, նախքան հրապարակելը:
- Կատարուած աշխատանքին մեր զօրակցութիւնը նշել առնչակից ամեն տեսակ նիւթերու մէջ՝ տպագիր, էլեկտրոնային թէ այլ:
- Մեր զօրակցութեան գրաւոր յիշատակումներուն մէջ գործածել Հիմնարկութեան ամբողջական անունը՝ «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն», նաեւ Հիմնարկութեան տարբերանիշը ներառել ըստ յարմարութեան: Նպաստառուներ պէտք է մեզի դիմեն տարբերանիշը ստանալու համար, ապա դրկեն համակարգիչի պաստառէն առնուած անոր մէկ պատճէնը, որպէսզի կարենանք վաւերացնել տարբերանիշին գործածութիւնը:
- Մեզի ուղարկել ծրագիրներու մասին ստացուած անդրադարձներու (լաւ թէ վատ) պատճէնները:
- Կարելիութեան պարագային մեզի ուղարկել մեր զօրակցութիւնը վայելող աշխատանքէն տեսանիւթեր, կարճ ժապաւէններ եւ տպագրութեան պահանջները բաւարարող բարձրորակ լուսանկարներ:



- Մեզի ուղարկել մեր գորակցութիւնը վայելող գիրքերէն եւ հրատարակութիւններէն օրինակներ:
- Ճիշդ գրել մեր անունը՝ այնպէս ինչպէս նշած ենք. Calouste Gulbenkian Foundation / Գալուստ Գիւլպէնկեան Հիմնարկութիւն:

Վերոնշեալ կէտերուն վերաբերող յստակ ուղեցոյցեր ներառած ենք մեր
Նպաստատուութեան համաձայնագիրին մէջ որ կը կնքենք գործընկերներու հետ: